«Հայաստան» համահայկական հիմնադրամի
գործադիր տնօրեն պարոն Հ. Արշամյանին

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից

[redacted]

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Արշամյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց ուղղված ծրագրերը ֆինանսավորելուց առաջ դրանք քննարկե՞լ է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Եթե այո, ապա խնդրում եմ նշել՝ քանի՞ քննարկում է տեղի ունեցել մինչ օրս, ո՞ր ծրագրերի վերաբերյալ, արդյոք քննարկումներին մասնակցե՞լ են քաղաքական և հայեցողական պաշտոններ չզբաղեցնող պաշտոնատար անձինք՝ քաղաքացիական ծառայողներ: Եթե քննարկումներ տեղի չեն ունեցել, ապա ինչո՞ւ:

2. Համացանցից տեղեկանում ենք, որ Հիմնադրամը միաժամանակ պրոթեզների արտադրության և տրամադրման մասով աջակցում է երկու կազմակերպության: Ինչո՞ւ: Ինչպե՞ս են ընտրվել, թե որ կազմակերպություններն են (ներառյալ շահույթ հետապնդող) ստանալու Հիմնադրամից ֆինանսական աջակցություն:

3. Հիմնադրամի կողմից կատարվե՞լ է ուսումնասիրություն, թե քանի անձ է ունենալու պրոթեզավորման կարիք, որքանով են գործող պրոթեզարանները ծանրաբեռնված և այլն: Եթե այո, ապա խնդրում եմ ներկայացնել ուսումնասիրությունը: Եթե ոչ, ապա խնդրում եմ նշել նշված ծրագրերի հիմնավորումները:

4. Պրոթեզարաններին աջակցելուց առաջ տեղի ունեցե՞լ են քննարկումներ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ՝ ծրագրերը տնտեսական մրցակցության վերաբերյալ ՀՀ

օրենսդրությանը համապատասխանեցնելու համար: Եթե այո, ապա ե՞րբ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

5. Հիմնադրամի կողմից ստացվե՞լ են հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված այլ ծրագրերի ֆինանսավորման հայտեր: Ո՞ր կազմակերպություններն են դիմել հիմնադրամին, ի՞նչ ծրագրով (հակիրճ նկարագրություն), ո՞րն է ֆինանսավորման կարգավիճակը դեկտեմբերի 22-ի դրությամբ:

6. Նշված ծրագրերը ֆինանսավորելու կամ չֆինանսավորելու որոշումը կայացնելուց առաջ անցկացվո՞ւմ են խորհրդակցություններ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների հետ:

7. Հիմնադրամը դիտարկե՞լ է արցախցիների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրումը, այդ թվում՝ կազմակերպության հիմնման և զարգացման նպատակով:

8. Հիմնադրամը համագործակցո՞ւմ է Արցախի Հանրապետության Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնի հետ:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (5 օր՝ ներառյալ ոչ աշխատանքային օրերը):

Շնորհակալություն:

Մուշեղ Հովսեփյան
22.12.2020

[redacted]